

Հայերի դերը Թիֆլիսի տնտեսությունում XIX դարի II կեսին և XX դարի սկզբին

Եսայան Վ. Բ.

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ /Հայաստան, Երևան/
vardanesayan@yahoo.com

Վճռորոշ բառեր՝ թիֆլիսահայություն, XIX-XX դարեր, արդյունաբերություն, առևտուր, բանկային ոլորտ, տնտեսություն

Роль армян в экономике Тифлиса во второй половине XIX и начале XX веков

Есаян В.Б.

Институт истории НАН РА (Армения, Ереван)
vardanesayan@yahoo.com

Резюме: В образованной в 1846 г. Тифлисской губернии и ее центре Тифлисе проживало большое количество армян, которое, в частности, в экономике Тифлиса, имело весьма весомое значение. Вплоть до 1917 года армянам принадлежали почти все высоты торговой, промышленной и банковской отраслей.

Многие масштабные торговые, промышленные предприятия и банковские организации в регионе впервые были созданы именно армянами. Они были первыми также в деле ведения хозяйства по новейшим европейским стандартам, по проведению электричества, радио и канатной дороги. Богатейшие армяне Тифлиса были также в ряду первых добытчиков и экспортеров бакинской нефти. Во многих странах большое признание получили произведенные армянами табак, кожаные изделия и т.д.

Ключевые слова: тифлиские армяне, XIX-XX века, промышленность, торговля, банковская сфера, экономика

The role of Armenians in the economy of Tiflis in the second half of the XIX and early XX centuries

Esayan V.B.

Institute of History of NAS of RA (Armenia, Yerevan)
vardanesayan@yahoo.com

Abstract: In the Tiflis province formed in 1846 and its center, Tiflis, a large number of Armenians resided, which, in particular, in the economy of Tiflis, had a very significant significance. Until 1917, Armenians owned almost all the heights of the commercial, industrial and banking sectors.

Many large-scale commercial, industrial enterprises and banking organizations in the region were first created by Armenians. They were also the first in the management of the economy according to the latest European standards, for electricity, radio and cable cars. The richest Armenians of Tiflis were also among the earliest earners and exporters of Baku oil. In many countries, produced by Armenians tobacco, leather and other products, received great recognition.

Keywords: Tiflis Armenians, XIX-XX century, industry, trade, banking, economy

Հայտնի է, որ Այսրկովկասի ոչ պաշտոնական մայրաքաղաքը համարվող Թիֆլիսը երկար ժամանակ եղել է արևելահայ կյանքի կենտրոնը: Այստեղ են գործել ինչպես հասարակական-քաղաքական, այնպես էլ տնտեսական ու մշակութային հայկական շատ կազմակերպություններ ու կառույցներ: Տարածաշրջանում XIX դարի երկրորդ կեսից օրեցօր թափ հավաքող կապիտալիստական տնտեսաձևերը նպաստեցին նաև արևելահայ կապիտալի աննախադեպ զարգացմանն ու հզորացմանը, որի կարևորագույն կենտրոններից մեկն, անկասկած, Թիֆլիսի նահանգն էր և Թիֆլիս քաղաքը:

Տնտեսության զարգացմանը զուգընթաց XIX դարի ընթացքում կտրուկ աճում էր նաև քաղաքի բնակչությունը: Դարասկզբին օրինակ Թիֆլիս քաղաքի բնակչության մեծամասնությունը հայեր էին: Սակայն այնուհետև տարբերակիվ և օրբեկտիվ տարբեր պատճառներով այդ և այդ բուռն աճի արդյունքում էթնիկ խմբերի քանակական հարաբերությունները թե՛ նահանգում և թե՛ քաղաքում աստիճանաբար փոփոխություններ կրեցին: Արագ թափով աճեց ռուսների ու վրացիների թիվը: Այսպես՝ եթե 1803 թվականին Թիֆլիսի բնակչության 92.6%-ը հայեր էին, իսկ 1846 թվականին նրանց թիվը նվազել էր մինչև 75.4%, ապա

արդեն 1864 թվականին հայերը կազմում էին քաղաքի բնակչության ընդամենը 47.4%-ը: Իսկ բնակչության թվաքանակը ուներ հետևյալ պատկերը՝ Թիֆլիսի բնակիչների ընդհանուր թվաքանակը 1846 թ. 11906 մարդ էր, որից հայերի թիվը 8982 էր, վրացիներինը՝ 2621, թաթարներինը՝ 235, հույներինը՝ 3, ապա 1864 թ. այդ թվաքանակը համապատասխանաբար հետևյալ տեսքն ուներ՝ 60085, 28488, 14878, 1119, ?, 12302, 1865 թ.՝ 71051, 31000, 14787, ?, 12142, 1876 թ.՝ 104024, 37610, 22233, 2502, 417, 30823, 1897 թ.՝ 159590, 47133, 42200, 5577, 1238, 44823 և այլն¹: Այսինքն՝ ակներև է, որ հայերի քանակը գերազանցում էր առանձին վերցված մյուս բոլոր ազգությունների քանակին: Ավելին, ինչպես վկայում են ժամանակակից ուսումնասիրողներ Դ. Բաքրաձեն և Ի. Բերձենովը, Թիֆլիսին շատ բաներով է պարտական հայերին, այդ թվում եվրոպական ոճի տների մեծ քանակությամբ²: Ի հավելումն դրա Դմ. Շալիկաշվիլին էլ վկայում է, որ «Տների, առևտրային և այլ կազմակերպությունների մեծ տոկոսը գտնվում էր հայերի ձեռքում ...»³:

Ժամանակի ընթացքում տարբեր պատճառներով հայերի թվաքանակը թեև նվազել է, բայց քանի որ առևտուրն ու արհեստները քաղաքակերտ (ուրբանիստական) երևույթներ են, այդ պատճառով հայերը, որպես տնտեսական այդ ոլորտների բազմադարյա ավանդույթների կրողներ, երկար ժամանակ եղել են Թիֆլիսի բնակչության հիմնական տարրը: Մասնավորապես XIX դարի երկրորդ կեսին և XX դարի առաջին տասնամյակներում նրանք դարձյալ մեծ թիվ էին կազմում, հետևապես նաև նշանակալի դերակատարություն ունեին Թիֆլիսի նահանգի և քաղաքի տնտեսության տարբեր ճյուղերում, մասնավորապես առևտրաարդյունաբերական և բանկային ոլորտներում:

Հայերն են եղել Թիֆլիսի նահանգի և քաղաքի տնտեսության կարևորագույն ճյուղերի (առևտուր, ֆինանսավարկային ու բանկային գործ, արտադրական ու արդյունաբերական

ձեռնարկություններ և այլն) ստեղծման առաջնեկներն ու աներկբա առաջատարները: Հայ ազգաբնակչության կենտրոններից և միաժամանակ արևելահայ հարուստ դասակարգի բնակատեղի Թիֆլիսի նահանգն ու քաղաքն ունեին իրենց ներքին ինքնուրույն կազմակերպվածությունը: Քանի որ արհեստներն ու առևտուրը կարող էին զարգացնել քաղաքները, հետևապես հայ-վրացական փոխադարձ համաձայնությամբ քաղաքների բնակչության գերակշռող մասը կազմում էին մոքալաք հայերը⁴:

Հետագայում, երբ Վրաստանը նվաճվեց Ռուսաստանի կողմից, Դավիթ Անանունի դիպուկ բնորոշմամբ. «Անդրկովկասը դարձավ բաց շուկա, «տոնավաճառ», որի գլխավոր կրպակը Թիֆլիսն էր...իսկ դերակատարը՝ հայերը»⁵: Աստիճանաբար երկրամասի բնատնտեսությունը սկսեց տեղի տալ և սկիզբ առավ ապրանք արտադրող, ապրանքներով և փողով փոխհարաբերվող հասարակարգ: Անդրկովկասը դարձավ մի մեծ շուկա, որը սպառում էր դրսից բերած ապրանքները դրա դիմաց տալով փող կամ երկրամասի հում և վերամշակման ենթակա նյութերը: Եվ այդ հարաբերություններում գլխավոր դերակատարը հայերն էին, որոնց էր վերապահված տնտեսական բարեփոխման առաջնությունը: Քանի որ եթե վրացիները ծով ունեին, թաթարները՝ նավթ, ապա **հայությունն ուներ մարդկային քաղաքակրթական ռեսուրս**, որից գուրկ էին մյուսները: Այդ պատճառով էլ հայտնվելով Ռուսական կայսրության միասնական ու համահավասար պետական, իրավական տարածքում, ընդհանուր պետության կազմում և «օգտագործելով տնտեսական գործունեությամբ զբաղվելու ազգեական հակումը, բազմադարյա գենը սկսեց «նվաճել» Անդրկովկասը և դարձավ Թիֆլիսի «տոնավաճառի գլխավոր կրպակիտներն ու տիրակալը»⁶:

Աստիճանաբար ձևավորվեց առևտրական, կապալառուական, վաշխառուական կապի-

¹ Տե՛ս Հայերը Թիֆլիսում, https://hy.wikipedia.org/wiki/գլխավոր_էջ:

² Տե՛ս Բաքրաձե Դ. և Բերձենով Ի., "Թիֆլիսն էրնիկ և պատմական հարաբերակցությամբ", Գ. Բերենշտամի հրատարակություն, Մանկտ Պետերբուրգ, 1870 թ.), էջ 131-133:

³ Տե՛ս "Ազատ Վրաստան", 29.01.1994:

⁴ <<Մոքալաք>> վրացերեն նշանակում է քաղաքացի, իսկ հետագայում վերածվեց պատվանունի:

⁵ Տե՛ս Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800-1870), հտ. Ա, Թիֆլիս, 1916, էջ 228:

⁶ Տե՛ս Դադայան Խ., Հայոց առևտրատնտեսական ներկայությունը Թիֆլիսում (ուշ միջնադար - 1918թ.), <21-րդ ԴԱԸ>, թիվ 1 (19), 2008թ., էջ 128:

տալ, որի տերերը հայերն էին: Այդ կապիտալն էր, որ փնտրելով գործադրման նոր ոլորտներ ստեղծեց Անդրկովկասի արդյունաբերությունը և բանկային համակարգը: Հարստացած հայ կապիտալիստների մի մասը հիմք դրեց Բաքվի նավթարդյունաբերության զարգացմանը, մյուս մասը **տնտեսական բուռն գործունեություն ծավալեց Թիֆլիսում**: 1847թ. սեպտեմբերի 1-ին Թիֆլիսի քաղաքացիներ **Մկրտիչ Շահ-Մուրադյանցը և Մակար Ղուլյանցը** առաջիններից էին, որ **հիմնեցին «Շահ-Մուրադյանց և Ղուլյանց» առևտրական տունը**, որը մատչելի գներով զանազան միջնորդական գործարքներ էր անում, դրամական փոխանցումներ կատարում: Վաճառական Թամաշյանին պատկանող Թատերական շենքի չորրորդ հարկի թիվ 17 կրպակում գտնվող այս առևտրական տունն առհասարակ Անդրկովկասի առաջին ֆիրման էր⁷:

1853 թ. Թիֆլիսում հաշվվում էր 3330 վաճառական, որոնցից հայ էին 2283-ը⁸: Առևտրով զբաղվում էին 466 պատվավոր քաղաքացիներն և 3217 պաշտոնապես գրանցված վաճառականներ, որոնք բացառապես հայեր էին⁹: 1876 թ. մարտի 25-ին Թիֆլիսում անցկացված մարդահամարի արդյունքում քաղաքն ուներ 104.024 բնակիչ, որից 12.356-ը ռուսական զորքն էր. 1864 թ. համեմատությամբ բնակչության աճը վիթխարի էր 55,5%: 37.610-ը (36,16%) հայեր էին, իսկ վրացիները՝ 22.156 (21,30%)¹⁰: Առևտրի ասպարեզում ևս առաջատարը հայերն էին (**6203 վաճառականներից հայ էին 4237-ը**): Վերամշակող արդյունաբերությամբ զբաղվող 11 հազար անձանց գրեթե կեսը ևս հայերն էին¹¹:

Թե՛ առևտրի և թե՛ արդյունաբերության ասպարեզներում վճռական դերակատարություն ունեցող հայերից էր **Գրիգոր Գրիգորի Ադելխանյանը**: Նա առաջինը տարածաշրջանում հիմնեց «Կովկասում Գ.Գ. Ադելխանովի կաշվի և թաղիքի արտադրության բաժնետի-

բական ընկերությունը»¹², որը Բաքվի նավթարդյունաբերական ձեռնարկություններից հետո ամենախոշոր ֆիրման էր Անդրկովկասում:

1869 թ. Գ.Ադելխանյանը Ռուսական պետական բանկի Թիֆլիսի բաժանմունքի վերահսկիչի կրտսեր օգնական էր: Երկու տարի անց դառնում է վերահսկիչ, իսկ ևս երկու տարի հետո նշանակվում 1871թ. թիֆլիսահայերի ստեղծած «Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերության» կառավարիչ: 1916 թ. Գ. Ադելխանյանը դեռևս վարում էր այդ պաշտոնը, այսինքն՝ Անդրկովկասի այդ հնագույն ֆինանսավարկային հաստատության կառավարիչ է եղել առնվազն 33 տարի: Սակայն հայ բիզնեսի պատմության մեջ Գ.Ադելխանյանը մնաց ոչ միայն այդ պաշտոնի շնորհիվ:

1875 թ. Վորոնցովսկայա փողոցում գտնվող սեփական շենքում նա հիմնեց կաշվի մի փոքրիկ գործարան: Այստեղ ընդամենը 30 բանվորներ զբաղվում էին ոչխարի և այծի կաշվի վերամշակմամբ, իսկ տարեկան արտադրանքը կազմում էր 60 հազար ռուբլի: Սակայն հենց սկզբից արտադրանքն այնքան բարձրորակ էր, այնպիսի լայն պահանջարկ ունեցավ, որ Ադելխանյանը խանութ բացեց Թիֆլիսում, ապա նաև՝ Սանկտ Պետերբուրգում (Կարավաննայա փողոցի թիվ 28 հասցեում): 1877 թ. գործարանն սկսեց վերամշակել նաև խոշոր եղջերավոր անասունների կաշին և դարձավ Անդրկովկասում արտադրության այդ ճյուղի անվիճարկելի առաջատարը: 1879 թ. Կովկասի փոխարքա և Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար Մեծն իշխան Միխայիլ Նիկոլանիչը պայմանագիր կնքեց Գ.Ադելխանյանի հետ, համաձայն որի նրա գործարանը բանակին 5 տարի ոտնամաններ պիտի մատակարարեր, տարեկան 360 հազար ռուբլու գումարի չափով: Հարկ է նշել, որ այդ պայմանագիրը շարունակաբար երկարաձգվեց, և Ադելխանյանը մշտապես մնաց բանակի մատակարար ընդհուպ մինչև 1917-1918թթ., երբ Կովկասյան ռազմաճակատը վերջնականապես կազմալուծվեց և ռու-

⁷ Տե՛ս Կавказский календарь на 1852 год, Тиф., 1851, էջ 190:

⁸ Տե՛ս Դադայան Խ., նշվ. Աշխ., էջ 130:

⁹ Տե՛ս «<Արթ»-ի պատկերազարդ օրացոյց 1895, Բաքու, 1894, էջ 58-59:

¹⁰ Տե՛ս Сборник сведений о Кавказе, т. VI, Тиф., 1880, էջ 127:

¹¹ Տե՛ս Կавказский календарь на 1908 год, Тиф., 1907, էջ 42:

¹² Տե՛ս Акционерное общество кожевенного и войлочного производств на Кавказе Г.Г. Адельханова. Краткий очерк истории возникновения, развития и современного положения фабрично-заводской деятельности общества 1875-1901гг., Тиф., 1901г.

սական գորքերը լքեցին Անդրկովկասը: Գ. Ադելխանյանն **առաջինն էր ամբողջ Կովկասում, որ կաշվի արտադրությունն իրականացրեց եվրոպական չափանիշներով:** Նրա արտադրանքը Մոսկվայի, Թիֆլիսի, Նիժնի Նովգորոդի ցուցահանդեսներում շահել է ոսկյա և արծաթյա մրցանակներ:

Սովորաբար լուրջ բիզնեսը մշտապես կարիք ունի ֆինանսական նորանոր ներդրումների: Հենց դա էր պատճառը, որ **1896 թ. ապրիլի 12-ին Գ.Ադելխանյանը Հովհաննես Ալիխանյանի և Պետրոս Ալիբեկյանի հետ ստեղծեց «Կովկասում Գ.Գ. Ադելխանովի կաշվի և թաղիքի արտադրության բաժնետիրական ընկերությունը»** 1,5 մլն ռուբլու հիմնադիր կապիտալով¹³: Այս արդյունաբերական հսկան բաղկացած էր երեք ձեռնարկությունից՝ կաշվի գործարանից, թաղիքի շոգեֆաբրիկայից և կոշիկի ֆաբրիկայից: Գործարանն զբաղեցնում էր 1,5 հա ասֆալտապատ ու ցեմենտապատ տարածք, իսկ կաշին գնվում էր ամբողջ Կովկասում:

1889 թ. հիմնված թաղիքի եռահարկ շոգեֆաբրիկան զբաղեցնում էր 1700 քառակուսի մետր տարածք, իսկ ընդհանուր մակերեսը 3150 քառակուսի մետր էր: Ֆաբրիկայի լուսավորության ու շարժիչները հոսանքով սնուցելու համար կից գործում էր սեփական էլեկտրակայան: 1890 թ. սկսած շոգեֆաբրիկան արտադրել էր տասնյակ հազարավոր յափնջիներ, 1896 թ.-ից նաև բուշլատներ, իսկ բարակ թաղիքից կարված տղամարդկանց ու կանանց վերնահագուստը լայն սպառում ուներ եվրոպական Ռուսաստանում և հատկապես Սիբիրում ու Հեռավոր Արևելքում որպես զինվորականների, երկաթգծի ծառայողների և ծովայինների համազգեստ:

1886 թ. հիմնված կոշիկի ֆաբրիկայի եռահարկ շենքում բանակի համար արտադրվում էին զինվորական երկարաճիտ սապոգներ, եվրոպական և ասիական բոլոր տեսակի կոշիկներ, որոնց տակացուները ներմուծվում էին հեռավոր ԱՄՆ-ից: Եվրոպական Ռուսաստանում ու Սիբիրում հատկապես մեծ պահանջարկ ունեին այժենակաճները և թաղիքե ոտ-

նամանները, որոնց գործարանային արտադրության հիմնադիրը կայսրությունում Գ. Ադելխանյանն էր: 1900 թ. Գ. Ադելխանյանի բոլոր երեք ձեռնարկություններում աշխատում էին 1107 բանվոր, որոնց տարեկան աշխատավարձը կազմում էր 231.402 ռ., իսկ համախառն արտադրանքը 1.904.451 ռ.:

1870թ. **մետաքսարդյունաբերող և ձկնարդյունաբերող**, իսկ հետո նաև Բաքվի նավթարդյունաբերության ռահվիրա **Հովհաննես Մինասի Միրզոյանն** ու **նրա եղբայր Գաբրիելը հիմնեցին Թիֆլիսիի բամբակե գործվածքեղենի առաջին գործարանը**, որը 20 տարի անց վաճառեցին նշանավոր **բանկատեր Հովհաննես Զիթախյանին** քաղաքի անշարժ գույքի ամենախոշոր սեփականատիրոջը:

1871 թ. հիմնվեցին Թիֆլիսի Առևտրային բանկը և Փոխադարձ վարկի ընկերությունը, որոնք «դարձան հայկական կապիտալի կուտակման և տնտեսական քաղաքականություն վարելու կենտրոններ»¹⁴: **Առևտրային բանկի հիմնադիրներն էին Մ. Ալիխանյանը, Հովհ. Ամիրադյանը. Դ. Նադիրյանը, Մ. Թամամշյանը, Ա. Ղորղանյանը, Ալ. Թալիրյանը, Խ. Տեր-Մկրտչյանը, Ալ. Օնիկյանը, Է. Էջուբյանը, Հովհ. Անանյանը, Ալ. Բաբանասյանը, Ս. և Հ.Իզմիրյան եղբայրները, Ն. և Ս. Միրիմանյանները, Ն. Փրիդոնյանը, Հովհ. Ռոտինյանը, Գր. Թամամշյանը, Մ. և Հովհ. Ծուրինյան եղբայրները, Ե.Դավթյանը, Հովհ. Եվանգուլյանը, Հովհ. Մարգարյանը, Ե., Ի. և Ալ. Ծովիանյան եղբայրները, Ե. Ջաղեթյանը, Հ. Ալեյանը, բժիշկ Ս. Շահպարտյանը**, որոնք իշխանություններին սիրաշահելու համար ընդգրկեցին իշխաններ Ն. Բեկթաբեկովին և Պ. Նակաշիձեին, բարձրաստիճան պաշտոնյաներ Ի. Զուբավովին ու Կ. Ռեյտերին և մի կարճ ժամանակով բանկի վարչության նախագահ ընտրեցին վերջինիս: Իր գործունեությունն սկսելով 500 հազար ռուբլի հիմնադիր կապիտալով այս բանկը 1914 թ. ուներ 6 մլն ռուբլի հիմնադիր ու 3,8 մլն ռուբլի պահուստային կապիտալ և **կովկասյան միակ ֆինանսական հաստատությունն էր, որի բաժնետոմսերը վաճառվում էին Պետերբուրգի սակարանում:**

¹³ St'u Акционерное общество коженного и войличного производств на Кавказе Г.Г. Адельанова. Краткий очерк истории возникновения, развития и современного положения фабрично-заводской деятельности общества 1875-1901 гг., Тиф., 1901 г.

¹⁴ St'u Устав Тифлисского коммерческого банка, Тиф., 1894. St'u նաև Устав Тифлисского общества взаимного кредита, Тиф., 1872.

Փոխադարձ վարկի ընկերությունը ևս ստեղծվեց նույն սկզբունքով: Վարչության խորհրդի նախագահ ընտրվեց Վ. Կայդանովը, անդամներ Ալ. Մանթաշյանը, Հովհ. Զիրթախյանը, Ալ. Մատինյանը, Ս. Ճաղելին, իսկ սկզբից մինչև վերջ կառավարիչն էր Գ. Ադելխանյանը: 1915 թ. վարկային այս հաստատության անդամներ էին 3102 հոգի:

1912 թ. նոյեմբերի 30-ին հայերը 5 մլն ռուբլի հիմնադիր կապիտալով **ստեղծեցին** նաև **Թիֆլիսի Վաճառականական Բանկը**¹⁵: Հիմնադիրներն էին Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսյանը, Ա. Միլյանցը, Ա. Բադրասարյանը, Մ. Բոգարջյանը, Հ. Սելյանյանը, Մ. Դոլուխանյանը, Ա. Էնֆիաջյանը, Ս. Գյուլբենկյանը, Ե. Թյունիբեկյանը, Գր. Համբարդանյանը, Հ. Կամոյանը, Ս. Տեր-Հովհաննիսյանը, Մ. Քալանթարյանը, Մ. Մարաիրոյանցը: Համեմատության համար նշենք, որ այս նույն թվականին վրաց վերնախավը ստեղծեց իր առաջին՝ Թիֆլիսի Ազնվականական հողային բանկը, որի հիմնադիր կապիտալն ընդամենը 147.300 ռուբլի էր:

1880-ական թվականները **թիֆլիսահայ կապիտալի համար նոր վերելքի շրջան** հանդիսացան: Թիֆլիսի Առևտրական պատգամավորության (Торговая депутация) նախագահ, 1-ին գիլդիայի վաճառական **Գևորգ (Եզոր) Մովսեսի Ղազումյանը հիմնեց «Եզոր Կասումով և ընկ.» առևտրական տունը**: Նախնական կապիտալն ընդամենը 14 հազ. ռուբլի էր: 1881թ. այդ ընկերությունն արդեն ուներ 620 ավանդատու, իսկ հիմնադիր կապիտալը 88 հազար ռուբլի էր¹⁶:

1881թ. նոր շուկաներ ուսումնասիրելու «հետախուզական» նպատակով Աեդրկովկաս այցելելած ռուս կապիտալիստ Ս. Մորոզովի առևտրային գործակալ Ա. Մակարովը արձանագրում էր. «Թիֆլիսում ռուսական առևտրաարդյունաբերական շահերը հանձնված են հայերին»¹⁷: Նույն թվականին «Կավկասյի կալենդար» պարբերականը գրում էր. «Թիֆլիսի նահանգի բոլոր քաղաքներում հայերն իշխող տարր են. Թիֆլիսում բնակչության գրեթե կեսը (45%) հայեր են: 1889 թ. Թիֆլի-

սում պաշտոնապես գրանցված էին 1-ին և 2-րդ գիլդիայի 47 վաճառականներ, որոնցից 29-ը հայեր էին»¹⁸:

Դեռևս 1855 թ. **Համբարձում Էնֆիաջյանը Թիֆլիսում ուներ գլանակի երկու կրպակ**, (մեկը Երևանյան հրապարակում, Թամամշյանի տան առաջին հարկում էր, մյուսը՝ Վելյամինովսկայա փողոցում, Խոջամինասյանի տանը): Սրանք քաղաքում ծխախոտի առաջին քաղաքակիրթ վաճառատեղիներն էին: Հ. Էնֆիաջյանցն առաջինն էր, որ զբաղվեց ծխախոտի արդյունաբերական արտադրությամբ: Նա ուներ ընդարձակ պլանտացիաներ, որտեղ աշխատում էին բազմաթիվ փորձառու համշենահայ ծխախոտագործներ: 1895 թ. Հ. Էնֆիաջյանցը հիմնում է «Միր» ֆաբրիկան, որը 1901-ին վաճառում է ազգակիցներին, իսկ ինքը հիմնում նորը: Նա մեծ հեղինակություն ու հարգանք էր վայելում Թիֆլիսում. 2-րդ գիլդիայի վաճառականը քաղաքային Հասարակական կառավարչության անդամ էր և դումայի պատգամավոր (1864թ.), 1895-ից Փոխադարձ վարկի ընկերության անդամ¹⁹:

Հոր բիզնեսը հաջողությամբ շարունակեց ու որակական նոր աստիճանի հասցրեց **որդիներից Արտաշեսը**²⁰: 1912 թ. «Ա. Հ. Էնֆիաջյանց» ֆաբրիկայում աշխատում էր 280 բանվոր (քանակով ամենամեծաթիվը), և արտադրվում էր տարեկան 1 մլն ռուբլու ծխախոտ: Տաբրիկան թողարկում էր «Սուլիդնիյե», «Ինտելիգենտնիյե», «Էքստրա» անվանումներով ընտիր գլանակներ, որոնք արտահանվել են Եվրոպա և ԱՄՆ:

Ա. Էնֆիաջյանցը խորապես ազգասեր մարդ էր: Լինելով քաղաքային դումայի պատգամավոր, նա միաժամանակ Փոխադարձ վարկի ընկերության անդամ էր, Վաճառականական ատյանի ավագի տեղակալ, Մակարանային կոմիտի անդամ: Համբարձում Էնֆիաջյանցի «Միր» ֆաբրիկայի հիման վրա 1901թ. Թիֆլիսում ստեղծվեց նույնանուն բաժնետիրական ընկերությունը, որի վարչության նախագահն էր Բ. Եղիազարյանը, անդամներ էին

¹⁵ S. E. Ustav Tiflisskogo kupchesskogo banka, Tifl., 1913.

¹⁶ St. u Kavkazskiy kalendar na 1883 god, Tifl., 1882, c. 212:

¹⁷ St. u Makarov A, Zakavkazye v torgovom otnoshenii, M., 1884, c. 155

¹⁸ Դադայան Խ., նշվ. Աշխ., էջ 138:

¹⁹ (Նորավանք, «21-րդ ԴԱԸ», թիվ 1 (19) 135,136, 139,140 էջ, 2008թ.):

²⁰ Նախատեսում ենք մոտ ապագայում Արտաշես Էնֆիաջյանի մասին առանձին ուսումնասիրություն հրապարակել, ուստի նրա մասին կխոսենք շատ համառոտ:

Գ. Տեր-Ասատրյանը և Մ. Անտոնյանը (մեկ տարի անց վարչության անդամներ դարձան Գ. Բայանդուրյանը, Ռ. Գոքինյանը): 500 հազար ռուբլի հիմնադիր կապիտալով այդ ֆիրման արտադրում էր «Ատլաս» մականիշի ծխախոտ ու գլանակներ, որոնք վաճառվում էին Թիֆլիսի ու Բաքվի սեփական խանութներում: Ընդամենը 79 բանվոր ունեցող այս ֆաբրիկան տարեկան թողարկում էր 750 հազար ռուբլու ծխախոտ:

1918-1920 թթ. քաղաքական հեղափոխական փոփոխությունների և անկայուն վիճակի պատճառով Հ. Էնֆիաջանցը ստիպված արտագաղթեց և հիմնվեց Բելգիայում: Բրյուսելում նա հիմնեց «Էնֆի» անունով ծխախոտի ֆաբրիկա, որտեղ հիմնականում աշխատում էին բազմաթիվ գաղթական կովկասահայեր²¹:

Թիֆլիսի ծխախոտի հնագույն ֆաբրիկաներից մեկն էլ դեռևս 1873 թ. հիմնել է **Միքայել Սաֆարյանը**: Այս ֆաբրիկայի արտադրանքի բարձրորակ և ճանաչված լինելու մասին են վկայում եվրոպական ցուցահանդեսներում շահած 14, ինչպես նաև այլ տեղերի մրցույթներում 17 մեդալների ու պատվոգրերի և այլ տարբեր հեղինակավոր պարգևների արժանանալու փաստը: 1898 թ. երբ **Միքայել Սաֆարյանի մահվանից հետո** բիզնեսը շարունակեց դուստրը՝ Նատայան: Բայց կնոջ համար դժվար էր ծխախոտարդյունաբերությամբ զբաղվել: Այդ իսկ պատճառով նա ֆաբրիկան վաճառեց, սակայն պայմանավորվածության համաձայն նոր սեփականատերերը պահպանեցին ֆիրմայի անվանումը (դա բիզնեսի հաջողության լավագույն երաշխիքներից մեկն էր): Միայն 1914 թ. «Մ.Պ. Սաֆարյանի ժառանգներ» ֆիրման արտադրեց 200 հազար ռուբլու ծխախոտ:

1910 թ-ից Թիֆլիսում սկսեց գործել և շատ արագ հաջողություններ արձանագրեց մեկ այլ ծխախոտարդյունաբերական «Մեյլանյան եղբայրներ» առևտրական տան ֆաբրիկան: Վերջինիս տարեկան արտադրանքը կազմում էր 500 հազար ռուբլի: Ձեռնարկությունը թողարկում էր «Պրիմա», «Ձեֆիր», «Դելիկատնիյե»

²¹ Նշենք, որ 1925թ., «Էնֆիից» բացի Բելգիայի մայրաքաղաքում հայերին էին պատկանում ևս չորս ծխախոտարդյունաբերական ձեռնարկություններ Ա. և Հ.Գոյունճյան եղբայրների «Էլմաս», Դ.Մարյանի «Տավոս», Տ. Մուրադյանի «Կարս», Ա.Մաթոսյանի «Մարուֆ» ֆաբրիկաները:

անվանումներով գլանակներ և «Իմպերատորսկի», «Տուրեցկոյե սերոցե», «Պրիդվորեի», «Դյուբել տուրեցկի», «Մակեդոնսկի» անվանումներով ծխախոտ:

Պակաս հեղինակություն չէր վայելում նաև «Կոմետա» ֆաբրիկան, որը տարեկան թողարկում էր 300 հազար ռուբլու ծխախոտ: Ֆաբրիկայի արտադրանքը Հռոմի ցուցահանդեսում արժանացավ «Գրան պրի» մրցանակի և ոսկե մեդալի:

Սակայն Թիֆլիսի և առհասարակ Կովկասի ծխախոտարդյունաբերության անառարկելի առաջատարը **Նիկողոս Հովհաննեսի Բոզարջյանցն** էր, որի ֆաբրիկան հիմնադրվել էր դեռևս 1858 թ.: Թիֆլիսի Վերա թաղամասում գտնվող սեփական տանը գործող այդ ձեռնարկությունն աստիճանաբար թափ էր հավաքում և առաջադիմում: Սակայն թուրքահպատակ Ն. Բոզարջյանցը սեփական պլանտացիաներ ունենալու իրավունք չուներ: Այդ իսկ պատճառով նա օգտագործելով ազգակցական, հայրենակցական կապերը Թուրքիայից էր ներկրում բարձրորակ հումքը: Բարեխիղճ աշխատանքի և բարձր որակի շնորհիվ շուտով ֆաբրիկայի արտադրանքը մեծ հաջողություններ ունեցավ: Ընտիր մանրացված ծխախոտի և գլանակների համար 1889 թ. Գյուղատնտեսական և արդյունաբերական իրերի կովկասյան ցուցահանդեսում նա պարգևատրվեց ոսկե մեդալով²²:

Նիկողոս Բոզարջյանցի բիզնեսը հաջողությամբ շարունակեցին որդիները Հովհաննեսը և Արշակը: Նրանք հիմնեցին «Ն.Հ. Բոզարջյանց և որդիներ» ֆիրման, որը բոլոր տնտեսական ցուցանիշներով ոլորտում դարձավ բացահայտ առաջատար: Միայն 1914 թ. ֆաբրիկան թողարկեց 1 մլն 300 հազ. ռուբլու արտադրանք: Դրանք ընտիր տեսակների ծխախոտ ու գլանակներ էին, որոնցից հատկապես թանկարժեք ու հարգի էին «Սագանգեբայ» և «Պոխոդ» գլանակները: Ձեռնարկության համբավի մասին էր խոսում նաև այն փաստը, որ ֆիրման Մեծն իշխան Նիկոլայ Միխայլովիչի պաշտոնական մատակարարն էր:

Նշենք, որ 1912 թ. տվյալներով Թիֆլիսում կար 35 բաժնետիրական ընկերություն, որից 16-ը հայկական էին, որոնց ընդհանուր հիմնադիր կապիտալը կազմում էր 23.501.918

²² Տե՛ս Դադայան Խ., նշվ. աշխ., էջ 140:

ուրվի: 72 արդյունաբերական ձեռնարկություններից հայապատկան էին 38-ը:

Հայերն անվիճելի տեսեսական գերազանցություն ունեին **առևտրի ասպարեզում**: 1912 թ. վիճակագրական աղբյուրների տվյալներով հայերին էին պատկանում ասիական ապրանքների 17 խանութից 10-ը, 40 դեղատնից 19-ը, 110 պարենային խանութից 60-ը, գինու 19 խանութից 17-ը, գինու 206 նկուղից 109-ը, սպիտակեղենի 9 խանութից 6-ը, կանանց շրջագգեստի՝ 9-ից 3-ը, երկաթեղենի 38-ից 30-ը, ոսկու և արծաթի 28-ից 15-ը, խաղալիքների 11-ից 7-ը, 21 գրախանութից 13-ը, գորգի, մետաքսի ու բրդի 25-ից 12-ը, կաշվի 78-ից 53-ը, անտառափայտի 11-ից 8-ը, մանուֆակտուրայի 142-ից 90-ը, կահույքի 20-ից 18-ը, կոշիկի 40-ից 34-ը, 28 իջևանատներից 11-ը, 12 ռեստորաններից՝ 6-ը: 1912 թ. Թիֆլիսի 1-ին գիլդիայի 15 վաճառականներից հայ էին 7-ը, 2-րդ գիլդիայի 68 վաճառականներից 42-ը²³: Իսկ արդեն 1916 թ. Թիֆլիսում հայերին էր պատկանում 42 դեղատնից 21-ը, 146 բակալեային խանութից 84-ը, 7 թղթավաճառ խանութից 4-ը, 119 զինեվաճառ խանութից 63-ը, կաշվե իրերի 132 խանութից 116-ը, պարենային ու երջիկեղենի 29 խանութից 24-ը, 37 փայտ վաճառող խանութից 21-ը, երկաթեղենի 36 խանութից 33-ը, նավթի և նավթամթերքների 18 խանութից 17-ը, հրուշակեղենի 80 խանութից 45-ը, 22 գրավաճառներից հայ էին 15-ը, 20 գորգավաճառներից 9-ը, 67 կաշեվաճառներից 61-ը, 9 սրճարաններից հայերին էր պատկանում 6-ը, 117 ալրավաճառ խանութներից 98-ը, մանուֆակտուրայի ու մահուղի 133 խանութից 101-ը, կահույքի 22 խանութից 19-ը, հանքային ջրերի 11 խանութից 6-ը, պատրաստի հագուստի 32 խանութից 28-ը, ծխախոտի 11 խանութից 9-ը, ժամացույցների, ոսկե և արծաթե իրերի 45 խանութից 19-ը, ոգելից խմիչքների 6 գործարանից 5-ը, աղյուսի 3 գործարանից 2-ը, ն կոնֆետի 6 ֆաբրիկաներից 3-ը, 3 ձիթհան գործարաններից 2-ը, 17 էլեկտրակայաններից 8-ը, 2 սրճավաճառ խանութները, կոշիկի բոլոր 34 խանութները, օճառի 2 գործարանները, ծխախոտի 6 ֆաբրիկաները, կաշվի ու թաղիքի

2 գործարանները, մակարոնի միակ ֆաբրիկան²⁴:

Հայերը հիմնել և մշտապես իրենց ձեռքում էին պահել Թիֆլիսի գրեթե ամբողջ **բանկային բիզնեսը**, քաղաքային գրավատունը, Առևտրական պատգամավորությունը, Վաճառականական ասոյանը, Սակարանային կոմիտեն: Ինչպես իրավամբ նշում է ժողովրդագիր Բ. Իշխանյանը. «Կովկասի այլ ազգությունների համեմատ հայությունը, քաղաքային բնույթի զբաղմունքներում գորեղ մասնակցության շնորհիվ, առաջին տեղն էր գրավում արդյունաբերությունում և առևտրում»²⁵: Իսկ հարգարժան հետազոտող Խ. Դադայանը իրավացիորեն ավելացնում է, որ «լիակատար հիմնավորվածությամբ կարող ենք արձանագրել, որ Թիֆլիսում ինչպես թվային գերակշռությունն էր պատկանում հայերին, այնպես էլ նրանց ձեռքում էր քաղաքի կառավարումն ու տնտեսության մեծագույն մասը: Այսինքն Թիֆլիսը «հայկական քաղաք» էր²⁶:

Առհասարակ հայոց կապիտալի և մասնավորապես Թիֆլիսի նահանգի ու նույնանուն քաղաքի առևտրաարդյունաբերական և բանկային գործի պատմությունը հարուստ է մեծ թվով նշանավոր անձանցով: Դրանցից են Ալեքսանդր Մանթաշյանցը, Ալեքսանդր **Մանթաշյանցը (Մանթաշև, Մանթաշով)**, Միքայել Արամյանցը, Համբարձում և Արտաշես Էնֆիաջյանները, Բոգարջյանների ընտանիքը, Միքայել Սաֆարյանը, Ադելխանյանների ընտանիքը և շատ ուրիշներ, որոնց կանդրադառնանք հետագայում:

Ամփոփելով նշենք, որ XIX դարում և XX դարի առաջին երկու տասնամյակներում տարբեր պատճառներով Թիֆլիսի նահանգի և նույնանուն քաղաքի հայերի թվաքանակը աստիճանաբար նվազում էր, սակայն առևտրաարդյունաբերական և բանկային ոլորտներում մինչև 1917 թ. նրանք պահպանում էին իրենց գերակա դիրքերը:

²³ Տե՛ս Տրավաչի Տրավաչի, 1912 թ.

²⁴ Տե՛ս Кавказский календарь на 1917 год, Тиф., 1916г., էջ 1-47:

²⁵ Տե՛ս Ишханян Б., Народности Кавказа. Состав населения, профессиональная группировка и общественное расселение кавказских народностей, Тгр., 1917, էջ 67:

²⁶ Դադայան Խ., նշվ. աշխ., էջ 144: